հանդիպի, հո՛ն կը հիւանդանայ ու կը վախճանի 1683 ին եւ մարմինը կ'ամփոփուի տեղւոյն Ս. Մինաս մատրան մէջ, ինչ որ կը հաստատէ Երեմիա Չէլէպի՝ առ Եղիազար կթղ. գրած 1690 թուականն նամակովն ալ։

Մարտիրոս պտրք. Սկիւտարի մէջ կը հիմնէ հոգեսուն մը Ս. Յակոբի միաբաններու հիւրասիրութեան համար, ինչպէս կը յիշէ Կարապետ կթղ. Ուլնեցի իր հիմնական գրութեան մէջ. (Երեւան 1859 էջ 330). նոյն Հոգետունը յետոյ կը նորոգուի յիշատակարանի մը համաձայն՝ որ է հետեւեալը. «ի հիմանէ նոր շինեցաւ յարկս վերնատնօք և միջնատնօք և ներքնատնօք. արդեամբք Տեառն Գրիգորի և Տեառն Յակոբայ պատրիարքաց Երուսաղէմի և Կ. Պոլսոյ ի վայելումն նոցա և ամենայն բարեկամաց նոցա և սրբոյ աթոռոյն Ջատագովչաց, անծախ և անքակ յիշատակ սուրբ Յակոբայ որ յԵրուսաղէմ, որք քակեն կամ ծախեն զմասն Յուդայի առցեն։»

Երեմիա Չէլէպի իր Օրագրութեան մէջ (էջ 131) կը յիշէ Մարտիրոս վրդ.ի մէկ հոգածութիւնը Ս. Յակոբի վանքի մասին՝ պատրիարքութենէն առաջ. «1656, մարտ 27, եշի. առաւօտուն Մարտիրոս վրդ. դաս քաշեց զէսէլի թոռն վասն պառաւի մը, որ կտակ առնէ Երուսաղիմայ Լ. ոսկի և էսէլի թոռն կուխրատէ տեարք պառաւոյն՝ թէ մի տայք զոսկին և նոքա չեն տար. և ի սորա հետն զգոմէշի որդին՝ զՅակոբն, կի հայրն կտակ արարեալ Երուսաղիմայ Ի. ոսկի, և մինչև ցայժմ ոչ ետուն. վասն այնորիկ դաս քաշեց». դարձեալ նոյն Օրագրութեան համաձայն՝ Մարտիրոս վրդ. ուրիշներու միջնորդութեան վրայ, Էսէլի թոռան՝ Խաչատուր երէցին բանադրանքը կը վերցնէ և կ'արտօնէ քահանայագործութիւնը։

ՌՃԼԱ. (= 1682) թուականով Մարտիրոս պտրք.ի Օրհնութեան մեկ կոնդակը կը գտնուի Վիեննայի Ձեռագրաց մատենադարանին մէջ (Տաշ. Ցուց. էջ 1034)։ Հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները կը քաղենք անկէ. կոնդակին վերը, հրեշտակը սկիհ մը բռնած է նշխարքով, որուն վրայ Քրիստոսի գլուխը նկարուած է։ Սկիհը կեցած է բոլորակի մը վրայ. որուն մէջ կնիքը կայ՝ «Յիսուսի ծառայ Մարտիրոս վրդ. Դրիմեցի. Պատրիարգ Սրբոյ աթոռոյն Երուսաղէմի. թվ. ՌՃԺԶ (= 1667) խորագրով. կոնդակը ուղղուած է 1682 ին Լեհահայոց՝